Պատմության մրցույթներ Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում 3.0

Պատմության մրցույթ

ՄՈՌԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԻՇԵԼՈՒ ԱՐԱՆՔՈՒՄ

Խորհրդային և ետխորհրդային հիշողության լանդշաֆտը համայնքներում և ընտանիքներում

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ /ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆՄՈՒՇՆԵՐ

## ներկայացված ուսուցիչների կողմից

*Supported by* Federal Foreign Office

CIVIL SOCIETY COOPERATION

«Պատմության մրցույթներ Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում 3.0» ծրագրի շրջանակում 2021թ. վերապատրաստված ուսուցիչները կազմել և ներկայացրել են հետազոտական նախագծեր՝ նախապես տրամադրված ձևաչափին համապատասխան, որոնք հիմք են հանդիսացել աշակերտների / աշակերտական խմբերի կողմից ծրագրի շրջանակներում հետազոտությունների իրականացման համար: Նախագծի փորձագետ – դասընթացավարների կողմից ընտրվել և վերանայվել են հետազոտական նախագծերի 6 օրինակելի նմուշներ, որոնք կարող են օգտակար ռեսուրս հանդիսանալ «Պատմության մրցույթներ» ծրագրի հետագա փուլերում ներգրավված ուսուցիչների, ինչպես նաև հետազոտական նախագծեր իրականացնող ուսուցիչների համար:

| Հետազոտության ամփոփ նախագիծ 1 | |
|---|---|
| ***Մարզ***<br>***Համայնք***<br>***Դպրոց***<br>***Ուսուցիչ*** | Երևան<br>Քանաքեռ-Զեյթուն<br>ԵՊՀ առընթեր ֆիզմաթ հատուկ դպրոց<br>Աշոտ Եղիազարյան |
| ***Հետազոտության թեման***<br>*Գրեք թեման կամ վերնագիրը* | Երևան. Ժամանակների դիմագիծը միևնույն պողոտայում. Խորհրդային Թբիլիսյանից՝ Ազատության, այնուհետև՝ Հայաստանի անկախ հանրապետության Ազատության |
| ***Հետազոտության խնդիրը***<br>***(20-40 բառի սահմաններում)***<br><br>*Ներկայացրեք, թե ի՞նչ հետազոտական խնդիր եք լուծելու, ինչո՞ւ է դա կարևոր, ի՞նչ կիմանան աշակերտներն այդ հետազոտական խնդիրն ուսումնասիրելու արդյունքում* | Ազատության պողոտայի խորհրդային և հետխորհրդային փոխակերպումների (անվանափոխություններ, բնակչության փոփոխություն, շենքերի/շինությունների փոփոխություններ և այլն) ուսումնասիրության միջոցով բացահայտել խորհրդայինից հետխորհրդայինի անցման որոշ առանձնահատկություններ: Ավելի պարզ, իրականությանը համեմատաբար մոտ տեղական պատմության պատկեր-վերլուծություններ կձևավորվեն, առաջին քայլ կհանդիսանա բանավոր/տեղական պատմության մշակույթ ստեղծելու համար: |
| ***Հետազոտական հարցեր***<br>***(առավելագույնը 100 բառի սահմաններում)***<br><br>*Հետազոտական խնդիրներից ելնելով՝ ի՞նչ հետազոտական հարցերի եք պատրաստվում անդրադառնալ (ներկայացրեք հարցերի ձևով, օրինակ՝ ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունեցել մեր գյուղի/համայնքի եկեղեցու հետ խորհրդային և հետխորհրդային շրջանում, ինչպե՞ս էին փոփոխությունները անդրադառնում մարդկանց կյանքի ու պրակտիկաների վրա, այլ…)* | Ի՞նչ փոփոխությունների է ենթարկվել Ազատության պողոտան խորհրդային և հետխորհրդային տարիներին: Ինչպե՞ս են փոխվել պողոտայի և հարող փողոցների անվանումները, ճարտարապետությունը, բնակչությունը: Ի՞նչ հուշարձաններ են եղել, դրանցից որոնք են հանվել և որոնք ավելացվել, ինչո՞ւ, ի՞նչ կուսակցական/պետական շենքեր են եղել և ի՞նչ փոփոխությունների են ենթարկվել: Ազատության պողոտայի ճարտարապետական-քաղաքաշինական կերպարն ինչպե՞ս է փոխվել, Ազատության պողոտայի մշակութային օջախներն ինչո՞ւ և ինչպե՞ս են փոխվել, Ազատության պողոտայի պետական կուսակցական հիմնարկների փոփոխության ընթացքը, պատճառները: |

| | |
|---|---|
| ***Հետազոտության մեթոդաբանություն***<br>*(100-200 բառի սահմաններում)*<br><br>*Նկարագրեք, թե ինչպե՞ս եք ուսումնասիրելու թեման, որ կարողանաք պատասխանել հետազոտական հարցերին, ինչպիսի՞ տեղեկություններ եք հավաքելու, ինչո՞վ եք հիմնավորում այդ մեթոդի ընտրությունը, ինչպե՞ս (օրինակ դիտարկումներ, մամուլի հրապարակումներ, հարցազրույցներ, այլ…), ումի՞ց, ինչպես եք ընտրելու զրուցակիցներին, ինչո՞ւ հենց նրանց, որքա՞ն հարցազրույցներ եք անելու: Ինչպե՞ս եք գրանցելու տվյալները, եթե հարցարան եք կիրառելու, ներկայացրեք հարցերի մոտավոր շրջանակը: Ինչպե՞ս եք վերլուծելու արդյունքները (օրինակ՝ հարցազրույցների սղագրությունների, ֆոտո, վիդեո նյութերի, երկրորդային աղբյուրների տվյալների համադրում, տեքստի ձևով շարադրանք՝ որոշակի կառուցվածքով)* | Ստեղծվել է բանավոր/տեղական պատմության աշակերտական խումբ, դասղեկների ընդգրկմամբ office365-ով աշխատելու համար կազմել ենք հետազոտության ենթակա օբյեկտների ցանկ, հանձնարարել եմ ինքնուրույն ընտրել զրուցակից պապիկ, տատիկ, ծնողներ, հարազատներ, հարևաններ՝ ծրագրով նախատեսվածին համապատասխան տարիքի և հարցազրույցներ վերցնել իրենց համար հարմար տեխնոլոգիաներով, և դրանք քննարկել ենք:<br><br>Զրուցակիցներին ընտրելու համար հաշվի ենք առնում տարիքը, հետազոտությամբ ընդգրկված տարածքում ապրած ժամանակը, այլ վայրում ապրելու դեպքում՝ մեզ հետաքրքրող տեղական պատմության համար հարմար տեղեկատվություն ունենալը, կրթությունը, մասնագիտությունը, հարցազրույցի համար հիմնական պայմանների հարաբերական ապահովվածությունը: Զրուցակիցների որոնումները շարունակվում են: Զրուցակից գտնելուն օգնում, աջակցում են նաև որոշ գործընկերներ:<br><br>Չորս դասարանների սովորողները մեր ընտրած թեմաներով սովորում են ծրագրային տարբերակով հարցազրույցներ վերցնելու տեսությունը, տիտ գործիքների օգտագործման ուղղությունները, ձևերը, հնարավորությունները: Արդյունքների վերլուծության համար առանձնացնելու ենք զրուցակցի կյանքի, միջավայրի պատմության, հասարակական, ընտանեկան լավի ու վատի, ընդունվածի, մերժվածի, և այլնի մասին տեղեկատվություն: Դա կատարելու ենք հետազոտական հարցերի պատասխանները ստանալու և մեր պատրաստի արտադրանքը ստեղծելու, ներկայացնելու համար: Առկայության դեպքում փորձելու ենք ծանոթանալ զրուցակցի ընտանեկան արխիվին՝ լուսանկարներ, |

| | |
|---|---|
| | տեսագրություններ, հնարավոր հուշագրություններ, նամակագրություն և այլն: |
| ***Հետազոտության ժամանակացույց***<br>*(80-100 բառի սահմաններում)*<br><br>*Ներկայացրեք, թե ի՞նչ փուլերով եք կազմակերպելու հետազոտությունը և յուրաքանչյուր փուլի համար ի՞նչ ժամկետներում (հաշվի առնելով ծրագրի գործողությունները՝ ըստ ուղեցույցի): Աշակերտներին ծրագրի ներկայացումը, վերապատրաստման ընթացքում ձեր ստացած հմտություններով կիսվելը, նախապատրաստական առաջադրանքներ իրականացնելը ևս կարող եք դիտարկել որպես գործողություններ:* | Աշխատելու ենք հետազոտական պլանի հիմնական փուլերին և ժամանակացույցին համապատասխան, այսինքն՝ 2021թ. նոյեմբերից- 2022թ. մարտ: Հիմնականում գիտենք ընթացակարգը, անհրաժեշտ տեղեկատվություն ստացվում է office365-ով: Դեկտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում նախնական հետազոտական 4 դասարաններով այցեր ենք կատարել Հաղթանակի զբոսայգ, Ներքին Ջեյթուն, Ազատության պողոտա: Հանձնարարությունն էր՝ ի՞նչ տեսաք, ի՞նչպես կարող եք ներկայացնել տեսածը: Հանձնարարել եմ որոշակի տարիքի կամ ծանոթ, հարազատ մարդկանց հետ ինքնուրույն մշակած 10 հարցերով հարցազրույց վարել, հետազոտական պլանի նախնական տարբերակ է մշակվել: Կազմվել են հետազոտական նախնական խմբեր 11-րդ, 10-րդ, 9-րդ դասարանի աշակերտների մասնակցությամբ, որոնք էլ ստացել են ավելի հստակ տեղեկատվություն-հանձնարարականներ: |
| ***Հետազոտության հնարավոր ռիսկերը***<br>*(առավելագույնը 80 բառի սահմաններում)*<br><br>*Փորձեք պատկերացնել և ներկայացնել, թե հետազոտության իրականացման համար ի՞նչ դժվարություններ կամ խոչընդոտներ կարող են լինել և ինչպե՞ս եք պատրաստվում հաղթահարել դրանք* | Սովորողների ծանրաբեռնվածությունը, հիվանդություններ, եղանակային, տրանսպորտային, կոմունիկացիոն խնդիրներ, հոգնածություն, ձանձրույթ, արձակուրդային ուղևորություններ, մասնակից երկրներում քաղաքական և այլ փոփոխություններ: |
| ***Աշակերտական խմբի ներգրավման մոտեցումներ***<br>*(80-100 բառի սահմաններում)*<br><br>*Ինչպե՞ս եք կազմելու աշակերտական խմբերը, ի՞նչ մոտեցումներ եք կիրառելու,* | Առաջնային է գիտակցված կամավորության սկզբունքը: Դեռևս փորձնական դասերի ժամանակ ակտիվության, մոտիվացիայի դրսևորումները,նախնական հետազոտական շրջագայության տեղեկատվական պաշարի ներկայացումը, սովորողների հակումները, հետաքրքրությունները, կարծիքները, |

| | |
|---|---|
| *ինչպե՞ս եք կատարելու պարտականությունների/աշխատանքների բաշխումը* | ներուժը, ընտանեկան վիճակը, հոգեբանի խորհրդատվությունը, տնօրինության, դասղեկների, ծնողների հետ համագործակցությունը:<br><br>Աշխատանքի բաշխումը կատարվելու է սովորողի մոտիվացիոն, հետաքրքրությունների, հմտությունների, ցանկությունների փոխլրացման պայմաններին համահունչ: |

| Հետազոտության ամփոփ նախագիծ 2 | |
|---|---|
| ***Մարզ***<br>***Համայնք***<br>***Դպրոց***<br>***Ուսուցիչ*** | Երևան<br>Նոր Նորք<br>Թիվ 134 հիմնական դպրոց<br>Արմինե Խաչատրյան |
| ***Հետազոտության թեման***<br>*Գրեք թեման կամ վերնագիրը* | Ժամադրություն քանդած «Նորք» կինոյի մոտ |
| ***Հետազոտության խնդիրը***<br>***(20-40 բառի սահմաններում)***<br><br>*Ներկայացրեք, թե ի՞նչ հետազոտական խնդիր եք լուծելու, ինչո՞ւ է դա կարևոր, ի՞նչ կիմանան աշակերտներն այդ հետազոտական խնդիրն ուսումնասիրելու արդյունքում* | Բանավոր հիշողությունների, գրավոր աղբյուրների ուսումնասիրության միջոցով համեմատել ԽՍՀՄ շրջանի կինոթատրոնների, մասնավորապես՝ «Նորք» կինոթատրոնի և մերօրյա կինոթատրոնների շուրջ ձևավորված մշակույթը եւ սովորույթները: |
| ***Հետազոտական հարցեր***<br>***(առավելագույնը 100 բառի սահմաններում)***<br><br>*Հետազոտական խնդիրներից ելնելով՝ ի՞նչ հետազոտական հարցերի եք պատրաստվում անդրադառնալ (ներկայացրեք հարցերի ձևով, օրինակ՝ ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունեցել մեր գյուղի/համայնքի եկեղեցու հետ խորհրդային և հետխորհրդային շրջանում, ինչպե՞ս էին փոփոխությունները անդրադառնում մարդկանց կյանքի ու պրակտիկաների վրա, այլ…)* | Ի՞նչ մշակութային դեր է ունեցել «Նորք» կինոթատրոնը համայնքի կյանքում: Ի՞նչ դեր ուներ կինոն խորհրդային գաղափարախոսության մեջ և ինչո՞ւ էին նոր թաղամասերում կինոթատրոններ կառուցվում: Ի՞նչ տեսք է ունեցել կինոթատրոնը կամ ի՞նչ փոփոխությունների է ենթարկվել մինչ քանդվելը՝ արտաքինից և ներքինից: Ի՞նչ ժանրի ֆիլմեր էին ցուցադրում կինոթատրոնում: Ինչո՞ւ է քանդվել կինոթատրոնի շենքը: Ի՞նչ է կորցրել համայնքը կինոթատրոնի քանդումից: Ի՞նչ է ապագայում լինելու կինոթատրոնի շենքի փոխարեն, թե՞ այդպես էլ ավերակ ու աղբանոց է մնալու: |
| ***Հետազոտության մեթոդաբանություն***<br>***(100-200 բառի սահմաններում)***<br><br>*Նկարագրեք, թե ինչպե՞ս եք ուսումնասիրելու թեման, որ կարողանաք պատասխանել հետազոտական հարցերին, ինչպիսի՞ տեղեկություններ եք հավաքելու, ինչո՞վ եք հիմնավորում այդ մեթոդի ընտրությունը, ինչպե՞ս (օրինակ դիտարկումներ, մամուլի հրապարակումներ, հարցազրույցներ,* | Քանի որ «Նորք» կինոթատրոնը կարեւոր դեր է ունեցել տեղացի հնաբնակների կյանքում, հիմնականում տեղեկությունները հավաքելու ենք համայնքի բնակիչներից: Ուսումնասիրելու ենք ՀՀ ազգային արխիվում, հանրային գրադարանում, այլ տեղական՝ մասնավորապես Նոր Նորքի Համո Սահյանի անվան գրադարանում, կադաստրի եւ նախագծային ինստիտուտներում, ընտանեկան եւ անձնական արխիվներում պահպանված փաստաթղթեր, լուսանկարներ: Փնտրելու ենք էլեկտրոնային |

| | |
|---|---|
| *այլ…), ումի՞ց, ինչպե՞ս եք ընտրելու զրուցակիցներին, ինչո՞ւ հենց նրանց, որքա՞ն հարցազրույցներ եք անելու, ինչպե՞ս եք գրանցելու տվյալները, եթե հարցարան եք կիրառելու, ներկայացրե՛ք հարցերի մոտավոր շրջանակը։ Ինչպե՞ս եք վերլուծելու արդյունքները (օրինակ՝ հարցազրույցների աղագրությունների, ֆոտո, վիդեո նյութերի, երկրորդային աղբյուրների տվյալների համադրում, տեքստի ձևով շարադրանք՝ որոշակի կառուցվածքով)* | նյութեր, կինոյին և կինոթատրոններին առնչվող հոդվածներ։<br><br>Հետազոտության ընթացքում կիրառվելու են հետևյալ մեթոդները.<br>1. Դիտարկումներ։<br>2. Երկրորդային աղբյուրների (փաստաթղթեր, լուսանկարներ, հրապարակումներ, էլեկտրոնային նյութեր) ուսումնասիրություն։<br>3. Հարցազրույցներ։<br>Հարցազրույցի մասնակիցներին ընտրելու ենք պատահականության սկզբունքով (տարածքում ապրող մարդկանց հարցնելով) և ձնագնդիի մեթոդով (հարցվողին հարցնելով, թե ում հետ խորհուրդ կտան զրուցել) ։ Զրուցելու ենք նաև կինոթատրոնի աշխատակիցների հետ։ Մշակելու ենք երկու հարցարան. մեկը՝ համայնքի բնակիչների, մյուսը՝ կինոթատրոնի աշխատակիցների համար։<br>4. Խորացված հարցազրույց կինոգետի հետ։<br><br>**Նախնական հարցաշար համայնքի բնակիչների համար**<br>➢ Ի՞նչ կառուցվածք ուներ կինոթատրոնը (սրահները, միջանցքները)։<br>➢ Ի՞նչ ծառայություններ էին մատուցում կինոթատրոնի շենքում։<br>➢ Ինչպե՞ս էիք տեղեկանում նոր ֆիլմերի մասին։<br>➢ Ի՞նչ ժանրերի ֆիլմեր էին ցուցադրում։<br>➢ Ի՞նչ հիշողություններ ունեք կինոթատրոնի հետ կապված։<br>➢ Ի՞նչ դեր ուներ կինոթատրոնը համայնքի կյանքում։<br>➢ Ինչո՞ւ քանդեցին կինոթատրոնը և ե՞րբ, ո՞ւմ կողմից։<br>➢ Ինչպե՞ս էին պատրաստվում կինո գնալուն՝ հատուկ հագուստ, կոշիկ, շպար եւ այլն։<br><br>**Նախնական հարցաշար աշխատակիցների համար**<br>➢ Ի՞նչ աշխատողներ կային կինոթատրոնում։ |

| | |
|---|---|
| | ➢ Ի՞նչ կառուցվածք ուներ կինոթատրոնը (սրահներ, կինոբար, միջանցքներ, ռմբապաստարան)։<br>➢ Ի՞նչ ծառայություններ էին մատուցում կինոթատրոնի շենքում։<br>➢ Ինչպե՞ս էիք տեղեկանում նոր ֆիլմերի մասին։<br>➢ Ի՞նչ ժանրերի ֆիլմեր էին ցուցադրում։<br>➢ Ի՞նչ հիշողություններ ունեք կինոթատրոնի հետ կապված։<br>➢ Ո՞ր ֆիլմի ցուցադրումն էր ամենամարդաշատը։<br>➢ Ի՞նչ արժեր տոմսը, եղե՞լ են օրեր, երբ տոմսերն անվճար էին կամ ավելի էժան։<br>➢ Օրական քանի՞ ֆիլմ էր ցուցադրվում։<br>➢ Տարիքային, սեռային ի՞նչ առանձնահատկություններ կային։ Ո՞ր խումբն էր ավելի հաճախ այցելում կինոթատրոն։<br>➢ Ինչո՞ւ քանդեցին կինոթատրոնը։<br><br>**Փորձագետի հետ հարցազրույցի հարցերի շրջանակ**<br>➢ Ի՞նչ տարբերություններ կան խորհրդային շրջանի և ժամանակակից կինոթատրոնների ճարտարապետության, կառուցվածքի, ծառայությունների միջև։<br>➢ Այդ տարբերությունները ինչպե՞ս են կապված մշակույթի հետ։<br>➢ Ի՞նչ դեր ուներ կինոն խորհրդային մշակույթում։<br>➢ Ինչպե՞ս էր այդ դերն ազդում ժանրային մոտեցումների վրա։<br>➢ Ինչպիսի՞ ընթացակարգեր էին սահմանված այդ ժամանակ, և ինչո՞վ էին խորհրդային տարիների կինոթատրոնները տարբերվում ներկայիս կինոթատրոններից։<br><br>Արդյունքները վերլուծվելու են հետևյալ մեթոդներով.<br>1. Հարցազրույցների սղագրություն։ |

| | |
|---|---|
| | 2. Համակարգչային պանակում նկարահանված տեսանյութերի, ձայնագրությունների, նկարների հավաքում։<br>3. Հարցազրույցների նյութերի, լուսանկարների, տեսանյութերի համադրում։<br>4. Փոդքաստերի, բլոգի ստեղծում, տեսանյութերի պատրաստում։<br>5. Տեքստային շարադրանք, պրեզենտացիա՝ տեսանյութերի օգտագործմամբ։<br>6. Փորձելու ենք 3D մոդելավորման շնորհիվ վերարտադրել կինոյի շենքի արտաքին և ներքին մասերը։ |
| ***Հետազոտության ժամանակացույց***<br>***(80-100 բառի սահմաններում)***<br><br>*Ներկայացրեք, թե ի՞նչ փուլերով եք կազմակերպելու հետազոտությունը և յուրաքանչյուր փուլի համար ի՞նչ ժամկետներում (հաշվի առնելով ծրագրի գործողությունները՝ ըստ ուղեցույցի)։ Աշակերտներին ծրագրի ներկայացումը, վերապատրաստման ընթացքում ձեր ստացած հմտություններով կիսվելը, նախապատրաստական առաջադրանքներ իրականացնելը ևս կարող եք դիտարկել որպես գործողություններ* | 1. Աշակերտական խմբերի վերջնական ձևավորում և աշխատանքի դերաբաշխում խմբի անդամների միջեւ - մինչև 2021թ. դեկտեմբեր<br>2. Հետազոտական պլանի մշակում - մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը<br>3. Հետազոտական աշխատանքներ՝ հարցազրույցների իրականացում, արխիվների եւ այլ աղբյուրների ուսումնասիրություն, տեսանյութերի նկարահանում, մոնտաժում, սղագրում, դրոնի եւ այլ սարքերի օգնությամբ տեղանքի նկարահանում, կինոթատրոնի մոտ նկարված հին նկարների հավաքագրում եւ ուսումնասիրություն, ականատեսներից տեղեկատվության հավաքագրում, համադրում, փոդքաստների նկարահանում – հունվար-փետրվար, 2022թ.<br>4. Հետազոտական զեկույցի պատրաստում - մարտ, 2022թ.<br>5. Հետազոտական աշխատանքի պրեզենտացիայի պատրաստում – մարտ, 2022թ. |

| | |
|---|---|
| ***Հետազոտության հնարավոր ռիսկերը***<br>*(առավելագույնը 80 բառի սահմաններում)*<br><br>*Փորձեք պատկերացնել և ներկայացնել, թե հետազոտության իրականացման համար ի՞նչ դժվարություններ կամ խոչընդոտներ կարող են լինել և ինչպե՞ս եք պատրաստվում հաղթահարել դրանք* | Հետազոտության հնարավոր ռիսկերից են.<br><br>➢ Տպագիր աղբյուրների ոչ բավարար քանակը<br>➢ Հարցազրույցի մասնակիցների տրամադրած տեղեկատվության ոչ արժանահավատությունը (հաշվի առնելով այն հանգամանքը, որ կինոթատրոնը ավելի քան 30 տարի է չի գործում),<br>➢ Կինոթատրոնի աշխատակիցներին գտնելու հետ կապված դժվարությունները (նրանց թիվը քիչ է, հնարավոր է, որ նրանց մի մասը ողջ չէ, մյուսներն արտագաղթել են, երրորդների՝ կոնտակտների բացակայությունը)<br>➢ Խոչընդոտ կարող է լինել նաև այն, որ մարդիկ հրաժարվեն մեզ տրամադրել տեղեկություններ։<br>➢ Հետազոտության համատեղումը դասերի, պարապմունքների հետ (9-րդ դասարանը քննական է, և աշակերտները բացի դասերից, հաճախում են արտադպրոցական խմբակներ, պատրաստվում են քննությունների)։<br><br>Խոչընդոտները հաղթահարելու նպատակով փորձելու ենք հնարավորինս շատ մարդկանց ներգրավել։ Զնագնդիի մեթոդով փորձելու ենք յուրաքանչյուրից տեղեկանալ, թե էլ ով կարող է օգնել մեզ։ Հնարավորինս փորձելու ենք համադրել տեղեկությունները՝ սուբյեկտիվիզմից խուսափելու համար։ Աշխատանքները հիմնականում իրականացնելու ենք շաբաթ, կիրակի օրերին, որպեսզի աշակերտների դասերը չխանգարեն։ |
| ***Աշակերտական խմբի ներգրավման մոտեցումներ***<br>*(80-100 բառի սահմաններում)*<br><br>*Ինչպե՞ս եք կազմելու աշակերտական խմբերը, ի՞նչ մոտեցումներ եք կիրառելու, ինչպե՞ս եք կատարելու* | Նախապես 9ա և 9բ դասարաններում հայտարարվել է մրցույթի մասին, որից հետո բոլորը ստացել են առաջադրանք՝ ընտանեկան արխիվից գտնել և լուսաբանել ԽՍՀՄ ժամանակաշրջանում կառուցված որևէ հուշարձանի մոտ արված լուսանկար՝ նկարագրելով, թե ով է նկարում, երբ է արվել, ինչ առիթով, ինչ հուշարձան է, կա այսօր, թե ոչ։ |

| | |
|---|---|
| *պարտականությունների/աշխատանքների բաշխում* | Այնուհետև առավել մանրամասն աշխատանք կատարած աշակերտներից կազմվեց նախնական խումբը։ Աշակերտական խումբը կազմվել է ըստ ցանկության, ըստ աշակերտի ունակությունների և հնարավորությունների։<br>Աշխատանքի բաշխումը իրականացվել է ըստ աշակերտների ցանկության, նախընտրությունների, գիտելիքների, հմտությունների։<br>Վերջնական 7 հոգանոց թիմն ընտրվեց այն աշակերտներից, ովքեր քրտնաջան աշխատեցին, շատ ժամանակ տրամադրեցին, լրջորեն մոտեցան առաջադրանքին եւ ցուցաբերեցին պրոֆեսիոնալիզմ և նվիրում ինչպես անհատական, այնպես էլ թիմային աշխատանքի ընթացքում։ |

| Հետազոտության ամփոփ նախագիծ 3 | |
|---|---|
| ***Մարզ***<br>***Համայնք***<br>***Դպրոց***<br>***Ուսուցիչ*** | Տավուշ<br>Դիլիջան<br>№ 2 հիմնական դպրոց<br>Մանուշ Հովնանյան |
| ***Հետազոտության թեման***<br>*Գրեք թեման կամ վերնագիրը* | Ռուսական դպրոցի ճակատագիրը հետխորհրդային Դիլիջանում |
| ***Հետազոտության խնդիրը***<br>***(20-40 բառի սահմաններում)***<br><br>*Ներկայացրեք, թե ի՞նչ հետազոտական խնդիր եք լուծելու, ինչո՞ւ է դա կարևոր, ի՞նչ կիմանան աշակերտներն այդ հետազոտական խնդիրն ուսումնասիրելու արդյունքում* | Տեղեկատվություն Դիլիջանի ռուսական (այժմ՝ Դիլիջանի № 2 հայկական հիմնական) դպրոցի անցյալից և ներկայից։<br><br>Կհասկանան ու կկարևորեն տարբեր ժամանակաշրջանների գաղափարական տարբերությունները, դրանց դրսևորումը կրթության, դպրոցական կյանքի ու դրա կազմակերպման մեջ։ |
| ***Հետազոտական հարցեր***<br>***(առավելագույնը 100 բառի սահմաններում)***<br><br>*Հետազոտական խնդիրներից ելնելով՝ ի՞նչ հետազոտական հարցերի եք պատրաստվում անդրադառնալ (ներկայացրեք հարցերի ձևով, օրինակ՝ ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունեցել մեր գյուղի/համայնքի եկեղեցու հետ խորհրդային և հետխորհրդային շրջանում, ինչպե՞ս էին փոփոխությունները անդրադառնում մարդկանց կյանքի ու պրակտիկաների վրա, այլ…)* | Հիմնական հետազոտական հարցերն են<br><br>➢ Ինչո՞վ էր պայմանավորված Դիլիջանում ռուսական դպրոցի առկայությունը։<br>➢ Ի՞նչ փոփոխություններ էր կրել դպրոցը հետխորհրդային շրջանում, ինչո՞ւ։<br><br>Հետազոտական հարցերի մասին տեղեկատվություն ստանալու համար կազմել հարցաշար՝ պարզ, բաց և մտապահվող հարցերից։<br><br>1. Պատմեք Ձեր մանկության և ընդհանրապես կյանքի մասին։<br>2. Ի՞նչ եք հիշում № 2 ռուսական դպրոցի մասին։<br>3. Ի՞նչ կապ եք ունեցել դպրոցի հետ։<br>4. Ինչու՞ այն քանդեցին, ե՞րբ, ինչպե՞ս։<br>5. Ինչո՞ւ այն միացրեցին № 3 դպրոցին։<br>6. Ի՞նչ հետաքրքիր միջոցառումներ էիք կազմակերպում։ |

| | |
|---|---|
| | 7. Ովքե՞ր էին սովորում և դասավանդում ռուսական դպրոցում, ու՞ր են հիմա նրանք։<br>8. Ձեր երեխաների կամ թոռնիկների դպրոցը ինչպե՞ս էր տարբերվում Ձեր մանկության կամ ոչ ռուսական դպրոցից։<br>9. Ի՞նչ հագուստ կամ համազգեստ էիք կրում, վզկապ կապո՞ւմ էիք։<br>10. Կարո՞ղ ենք տեսնել Ձեր դպրոցական ալբոմը, եթե պահպանվել է, կամ լուսանկարներ։ |
| ***Հետազոտության մեթոդաբանություն***<br>***(100-200 բառի սահմաններում)***<br><br>*Նկարագրեք, թե ինչպե՞ս եք ուսումնասիրելու թեման, որ կարողանաք պատասխանել հետազոտական հարցերին, ինչպիսի՞ տեղեկություններ եք հավաքելու, ինչո՞վ եք հիմնավորում այդ մեթոդի ընտրությունը, ինչպե՞ս (օրինակ դիտարկումներ, մամուլի հրապարակումներ, հարցազրույցներ, այլ…), ումի՞ց, ինչպե՞ս եք ընտրելու զրուցակիցներին, ինչո՞ւ հենց նրանց, որքա՞ն հարցազրույցներ եք անելու, ինչպե՞ս եք գրանցելու տվյալները, եթե հարցարան եք կիրառելու, ներկայացրեք հարցերի մոտավոր շրջանակը։ Ինչպե՞ս եք վերլուծելու արդյունքները (օրինակ՝ հարցազրույցների սղագրությունների, ֆոտո, վիդեո նյութերի, երկրորդային աղբյուրների տվյալների համադրում, տեքստի ձևով շարադրանք՝ որոշակի կառուցվածքով)* | ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ<br>➢ Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրություն Դիլիջանի կենտրոնական գրադարանում։<br>➢ Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրություն համացանցում։<br>➢ Դիտարկումներ (հին լուսանկարներ դպրոցի ֆոնդից)։<br>➢ Դիտարկումներ ներկա վիճակի (ֆոտոներ/վիդեոներ ներկա վիճակի մասին)։<br>➢ Հարցազրույցներ նախկին և նոր շրջանավարտների հետ։<br><br>Զրույցը ձայնագրել, որը 2 ժամից չպետք է անցնի, եթե համաձայնվեն՝ լուսանկարել, ապա տալ ստորագրելու համաձայնագիրը։<br><br>ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ<br>➢ Հեռախոս, դիկտաֆոն<br>➢ Համակարգիչ<br>➢ Ֆոտոապարատ<br><br>ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ<br><br>➢ Նյութերը վերծանել, վերլուծել և ստանալ արդյունքները։ |

| | |
|---|---|
| | ➢ Քննարկել աշակերտների հետ ներկայացման մեթոդները և ընտրել ամենաներկայանալի տարբերակը: |
| ***Հետազոտության ժամանակացույց***<br>***(80-100 բառի սահմաններում)***<br><br>*Ներկայացրեք, թե ի՞նչ փուլերով եք կազմակերպելու հետազոտությունը և յուրաքանչյուր փուլի համար ի՞նչ ժամկետներում (հաշվի առնելով ծրագրի գործողությունները՝ ըստ ուղեցույցի): Աշակերտներին ծրագրի ներկայացումը, վերապատրաստման ընթացքում ձեր ստացած հմտություններով կիսվելը, նախապատրաստական առաջադրանքներ իրականացնելը ևս կարող եք դիտարկել որպես գործողություններ* | 1. Աշակերտներին ծրագրի ներկայացում և աշակերտական խմբի կազմում - **նոյեմբեր**<br>2. Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրություն Դիլիջանի կենտրոնական գրադարանում - **դեկտեմբեր**<br>3. Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրություն համացանցում - **դեկտեմբեր**<br>4. Դիտարկումներ՝ հին և նոր լուսանկարներ - **դեկտեմբեր**<br>5. Հարցազրույցներ նախկին շրջանավարտների հետ - **հունվար** |
| ***Հետազոտության հնարավոր ռիսկերը***<br>***(առավելագույնը 80 բառի սահմաններում)***<br><br>*Փորձեք պատկերացնել և ներկայացնել, թե հետազոտության իրականացման համար ի՞նչ դժվարություններ կամ խոչընդոտներ կարող են լինել և ինչպե՞ս եք պատրաստվում հաղթահարել դրանք* | Ռիսկեր գրեթե չեմ տեսնում: Միակ մտահոգությունն այն է, որ մարդիկ, գուցե, դժկամությամբ իրենց ժամանակը տրամադրեն մեզ, բայց ծանոթների ու հարազատների միջոցով նրանց կմոտիվացնենք ու մասնակից կդարձնենք մեր հետազոտության: |
| ***Աշակերտական խմբի ներգրավման մոտեցումներ***<br>***(80-100 բառի սահմաններում)***<br><br>*Ինչպե՞ս եք կազմելու աշակերտական խմբերը, ի՞նչ մոտեցումներ եք կիրառելու, ինչպե՞ս եք կատարելու պարտականությունների/աշխատանքների բաշխումը* | ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ<br>Ներկայացնել ծրագիրը 9-րդ դասարանցիներին և կարող ուժերից, իհարկե, ըստ ցանկության, կազմել 6 հոգանոց խումբ: Խմբի ներսում բաշխել անելիքները հետևյալ գործողությունների շուրջ՝<br><br>➢ Կազմել հարցաշար հեշտ, բաց և մտապահվող հարցերից:<br>➢ Կազմել ժամանակացույց՝ հստակ նշելով սկիզբն ու վերջը: |

| Հետազոտության ամփոփ նախագիծ 4 | |
|---|---|
| ***Մարզ***<br>***Համայնք***<br>***Դպրոց***<br>***Ուսուցիչ*** | Տավուշ<br>Դիլիջան<br>Դիլիջանի թիվ 4 հիմնական դպրոց<br>Արևհատ Աբգարյան |
| ***Հետազոտության թեման***<br>*Գրեք թեման կամ վերնագիրը* | «Անցյալի պատմություն, ներկայի հիշողություն». Լենինի հուշարձանի կյանքը Դիլիջանում |
| ***Հետազոտության խնդիրը***<br>***(20-40 բառի սահմաններում)***<br><br>*Ներկայացրեք, թե ի՞նչ հետազոտական խնդիր եք լուծելու, ինչո՞ւ է դա կարևոր, ի՞նչ կիմանան աշակերտներն այդ հետազոտական խնդիրն ուսումնասիրելու արդյունքում* | Փաստերի և պատմությունների հիման վրա բացահայտել խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի Լենինի հուշարձանի պատմությունը Դիլիջան համայնքում՝ կարևորելով անցյալի պատմության պահպանումը ներկայի հիշողություններում: Հետազոտական նախագիծը իրականացնելու ընթացքում երեխաները կիմանան խորհրդային ժամանակաշրջանի հիշողության քաղաքականությունը հուշարձանների միջոցով: Ձեռք կբերեն հետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ: |
| ***Հետազոտական հարցեր***<br>***(առավելագույնը 100 բառի սահմաններում)***<br><br>*Հետազոտական խնդիրներից ելնելով՝ ի՞նչ հետազոտական հարցերի եք պատրաստվում անդրադառնալ (ներկայացրեք հարցերի ձևով, օրինակ՝ ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունեցել մեր գյուղի/համայնքի եկեղեցու հետ խորհրդային և հետխորհրդային շրջանում, ինչպե՞ս էին փոփոխությունները անդրադառնում մարդկանց կյանքի ու պրակտիկաների վրա, այլ…)* | ➢ Ինչպիսի՞ն էր Դիլիջան համայնքի կենտրոնը խորհրդային տարիների ժամանակաշրջանում:<br>➢ Ի՞նչ հուշարձան էր տեղադրված համայնքի կենտրոնում: Ո՞րն էր տեղադրման պատմությունը:<br>➢ Ինչպիսի՞ն էր դիլիջանցիների վերաբերմունքը հուշարձանի նկատմամբ, և ի՞նչ նշանակություն է ունեցել այն բնակիչների կյանքում:<br>➢ Դիլիջանցիների ներկայի հիշողություններում ինչպե՞ս և որքանո՞վ է պահպանվում հուշարձանի պատմությունը:<br>➢ Ինչո՞ւ և ինչպիսի՞ փոփոխության ենթարկվեց Դիլիջանի կենտրոնը հետխորհրդային ժամանակաշրջանում:<br>➢ Որքանո՞վ էր անհրաժեշտ այդ փոփոխությունը և ինչպե՞ս |

| | |
|---|---|
| | անդրադարձավ մարդկանց և համայնքի վրա: |
| ***Հետազոտության մեթոդաբանություն***<br>***(100-200 բառի սահմաններում)***<br><br>*Նկարագրեք, թե ինչպե՞ս եք ուսումնասիրելու թեման, որ կարողանաք պատասխանել հետազոտական հարցերին, ինչպիսի՞ տեղեկություններ եք հավաքելու, ինչո՞վ եք հիմնավորում այդ մեթոդի ընտրությունը, ինչպե՞ս (օրինակ դիտարկումներ, մամուլի հրապարակումներ, հարցազրույցներ, այլ…), ումի՞ց, ինչպե՞ս եք ընտրելու զրուցակիցներին, ինչո՞ւ հենց նրանց, որքա՞ն հարցազրույցներ եք անելու, ինչպե՞ս եք գրանցելու տվյալները, եթե հարցարան եք կիրառելու, ներկայացրեք հարցերի մոտավոր շրջանակը: Ինչպե՞ս եք վերլուծելու արդյունքները (օրինակ՝ հարցազրույցների սղագրությունների, ֆոտո, վիդեո նյութերի, երկրորդային աղբյուրների տվյալների համադրում, տեքստի ձևով շարադրանք՝ որոշակի կառուցվածքով)* | Հետազոտության իրականացման համար կիրառելու ենք տարբեր մեթոդներ.<br>➢ Տարածքի մանրամասն դիտարկում, ֆոտո և վիդեոնկարահանում,<br>➢ Համացանցից, արխիվային փաստաթղթերից, հանրագիտարաններից, մամուլի հրապարակումներից տեղեկատվական նյութերի հավաքագրում,<br>➢ Բանավոր պատմության մեթոդով հարցազրույցների անցկացում:<br>-Հարցազրույցի համար տարբեր սեռի և տարիքի մարդկանց ընտրություն:<br>Հարցազրույցների հիմնական հարցեր.<br>1. Ինչպե՞ս կբնութագրեք խորհրդային ժամանակաշրջանում Դիլիջան համայնքի կենտրոնը:<br>2. Ի՞նչ կարևոր իրադարձություններ են տեղի ունեցել այդտեղ:<br>3. Ձեր կարծիքով ինչո՞ւ էր այդտեղ տեղադրված Լենինի արձանը, և ի՞նչ նշանակություն է ունեցել այն բնակիչների կյանքում:<br>4. Ձեր կարծիքով ներկայում ինչպե՞ս և որքանո՞վ է պահպանվում հուշարձանի պատմությունը դիլիջանցիների հիշողություններում:<br>5. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ փոփոխության ենթարկվեց Դիլիջանի կենտրոնը:<br>6. Ինչպիսի՞ ճակատագրի արժանացավ Լենինի հուշարձանը:<br>7. Որքանո՞վ եք կարևորում այդ փոփոխությունը: |

| | |
|---|---|
| | 8. Կցանկանայի՞ք, որ պահպանվեր հուշարձանը, ինչո՞ւ:<br><br>➢ Հարցազրույցների գրանցում նոթատետրում՝ առանց որևէ բառ փոխելու: |
| ***Հետազոտության ժամանակացույց***<br>***(80-100 բառի սահմաններում)***<br><br>*Ներկայացրեք, թե ի՞նչ փուլերով եք կազմակերպելու հետազոտությունը և յուրաքանչյուր փուլի համար ի՞նչ ժամկետներում (հաշվի առնելով ծրագրի գործողությունները՝ ըստ ուղեցույցի)*<br>• *Աշակերտներին ծրագրի ներկայացումը, վերապատրաստման ընթացքում ձեր ստացած հմտություններով կիսվելը, նախապատրաստական առաջադրանքներ իրականացնելը ևս կարող եք դիտարկել որպես գործողություններ* | ➢ Ծրագրի ներկայացում աշակերտներին: (1 օր)<br>➢ Առցանց, ստույգ աղբյուրներից տեղեկությունների հավաքագրում: (1-3 օր)<br>➢ Այցելություն համայնքի, համայնքապետարանի արխիվներ, Երկրագիտական թանգարան, գրադարան: (3 օր)<br>➢ Հարցաշարերի կազմում: (3 օր)<br>➢ Հարցազրույցների անցկացում: (10 օր)<br>➢ Հավաքագրված նյութերի վերլուծություն: (10օր)<br>➢ Վերջնական արդյունքի ներկայացում: (15 օր) |
| ***Հետազոտության հնարավոր ռիսկերը***<br>***(առավելագույնը 80 բառի սահմաններում)***<br><br>*Փորձեք պատկերացնել և ներկայացնել, թե հետազոտության իրականացման համար ի՞նչ դժվարություններ կամ խոչընդոտներ կարող են լինել և ինչպե՞ս եք պատրաստվում հաղթահարել դրանք* | Հետազոտության իրականացման համար կարող են լինել՝<br>➢ Արխիվների այցելության թույլտվության, փաստաթղթերի տրամադրման հետ կապված դժվարություններ,<br>➢ Հարցազրույցների ձայնագրման, վիդեո նկարահանման և լուսանկարահանման դժվարություններ ու խոչընդոտներ:<br><br>Խոչընդոտները հաղթահարելու համար անհրաժեշտ է ճիշտ և պատշաճ մոտեցում (օրինակ՝ արխիվի աշխատակիցներին, հարցազրույց տվող մարդկանց մատչելի ձևով ներկայացնել ծրագիրը, բացատրել աշխատանքի բնույթը և նշել, որ տրամադրվող նյութերը հրապարակման ենթակա չեն): |

| | |
|---|---|
| | Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրման անհնարինության դեպքում դիմել այն մարդկանց օգնությանը, ովքեր կարող են նպաստել ուսումնասիրման համար թույլտվության ձեռբերմանը: |
| ***Աշակերտական խմբի ներգրավման մոտեցումներ***<br>*(80-100 բառի սահմաններում)*<br><br>*Ինչպե՞ս եք կազմելու աշակերտական խմբերը, ի՞նչ մոտեցումներ եք կիրառելու, ինչպե՞ս եք կատարելու պարտականությունների/աշխատանքների բաշխումը* | Աշակերտական խմբի ներգրավման համար կիրառել հետևյալ մոտեցումները.<br>➢ Աշակերտների ցանկությամբ խմբի ձևավորում<br>➢ Ընդհանուր խմբի բաժանում 4 մասի (Յուրաքանչյուրում 2 հոգի)<br>➢ Խմբերի ուղղորդում<br>➢ Տեղանքի դիտարկում<br>➢ Տեղեկատվական փաստաթղթերի հավաքագրում (արխիվներ, համացանց, գրադարան, թանգարան և այլն)<br>➢ Հարցազրույցների անցկացում<br>➢ Աշխատանքների վերլուծության ընդհանուր մոտեցումների քննարկում<br>➢ Վերջնական արդյունքի ձևաչափի քննարկում և պատրաստում: |

| Հետազոտության ամփոփ նախագիծ 5 | |
|---|---|
| ***Մարզ***<br>***Համայնք***<br>***Դպրոց***<br>***Ուսուցիչ*** | Շիրակի մարզ<br>Գ. Ղարիբջանյան<br>Ղարիբջանյանի միջնակարգ դպրոց<br>Կարինե Քոչոյան |
| ***Հետազոտության թեման***<br>*Գրեք թեման կամ վերնագիրը* | Ի՞նչ են պատմում մեր բնակավայրերի անունները.Ղարիբջանյանը խորհրդային և հետխորհրդային հիշողություններում |
| ***Հետազոտության խնդիրը***<br>***(20-40 բառի սահմաններում)***<br><br>*Ներկայացրեք, թե ի՞նչ հետազոտական խնդիր եք լուծելու, ինչո՞ւ է դա կարևոր, ի՞նչ կիմանան աշակերտներն այդ հետազոտական խնդիրն ուսումնասիրելու արդյունքում* | Բացահայտել խորհրդային գաղափարախոսության և քաղաքականության որոշ առանձնահատկություններ ու դրանց ազդեցությունը գյուղի կյանքում՝ Ղարիբջանյան գյուղի վերանվանման և Ղարիբջանյանի անվանն առնչվող հուշարձանների և հիշողության լանդշաֆթի այլ բաղադրիչների ուսումնասիրության միջոցով: |
| ***Հետազոտական հարցեր***<br>***(առավելագույնը 100 բառի սահմաններում)***<br><br>*Հետազոտական խնդիրներից ելնելով՝ ի՞նչ հետազոտական հարցերի եք պատրաստվում անդրադառնալ (ներկայացրեք հարցերի ձևով, օրինակ՝ ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունեցել մեր գյուղի/համայնքի եկեղեցու հետ խորհրդային և հետխորհրդային շրջանում, ինչպե՞ս էին փոփոխությունները անդրադառնում մարդկանց կյանքի ու պրակտիկաների վրա, այլ…)* | ➢ Ե՞րբ է հիմնադրվել գյուղը և ի՞նչ անուններ է ունեցել՝ նախքան «Ղարիբջանյան» անվանվելը:<br>➢ Ե՞րբ և ի՞նչ փոփոխությունների է ենթարկվել գյուղի անվանումը, և ի՞նչ իրադարձությունների հետ է կապված:<br>➢ Ո՞վ էր Բագրատ Ղարիբջանյանը, և ինչո՞ւ է նրա անունով կոչվել գյուղը: Ի՞նչ գիտեն ղարիբջանյանցիները նրա մասին:<br>➢ Բագրատ Ղարիբջանյանի ի՞նչ հուշարձան կա գյուղում, որտե՞ղ և ե՞րբ է այն տեղադրվել: Կա՞ արդյոք հուշարձանը հիմա: Ի՞նչ վիճակում է:<br>➢ Խորհրդային տարիներին հուշարձանի մոտ միջոցառումներ կազմակերպվե՞լ են: Ի՞նչ առիթով:<br>➢ Այս փուլերից ամեն մեկում ի՞նչ փոփոխություն է կատարվել գյուղում, վերջիններիս ազդեցությունը մարդկանց կյանքի վրա:<br>➢ Արդյո՞ք հետխորհրդային շրջանում քննարկվել է գյուղի անվան փոփոխության խնդիրը: Եթե այո՝ ե՞րբ, |

| | |
|---|---|
| | ովքե՞ր են խնդիրը բարձրացրել, ինչու՞, ի վերջո, չի անվանափոխվել: |
| ***Հետազոտության մեթոդաբանություն***<br>*(100-200 բառի սահմաններում)*<br><br>*Նկարագրեք, թե ինչպե՞ս եք ուսումնասիրելու թեման, որ կարողանաք պատասխանել հետազոտական հարցերին, ինչպիսի՞ տեղեկություններ եք հավաքելու, ինչո՞վ եք հիմնավորում այդ մեթոդի ընտրությունը, ինչպե՞ս (օրինակ դիտարկումներ, մամուլի հրապարակումներ, հարցազրույցներ, այլ…), ումի՞ց, ինչպե՞ս եք ընտրելու զրուցակիցներին, ինչո՞ւ հենց նրանց, որքա՞ն հարցազրույցներ եք անելու, ինչպե՞ս եք գրանցելու տվյալները, եթե հարցարան եք կիրառելու, ներկայացրեք հարցերի մոտավոր շրջանակը: Ինչպե՞ս եք վերլուծելու արդյունքները (օրինակ՝ հարցազրույցների աղագրությունների, ֆոտո, վիդեո նյութերի, երկրորդային աղբյուրների տվյալների համադրում, տեքստի ձևով շարադրանք՝ որոշակի կառուցվածքով)* | Երեխաների հետ նախօրոք քննարկելու եմ խնդիրը: Համոզված լինելով, որ մեր աշխատանքը կարող է թիմային լինել, արդեն կսկսենք քննարկել այն հարցերը, թե ինչպե՞ս ենք հասնելու մեր ցանկալի արդյունքին:<br>Կարծում եմ, նպատակահարմար կլինի հիմք ընդունել հանրագիտարանային տեղեկությունները, այնուհետև յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար մեկ կամ երկու սովորողի հանձնարարություն տալ:<br>Անհրաժեշտ կլինի ուսումնասիրել մամուլի հրապարակումներ, արխիվային որոշ փաստաթղթեր, հարցազրույցներ անցկացնել և այլն:<br>Հարցերը հստակ դեռ մշակված չեն: |
| ***Հետազոտության ժամանակացույց***<br>*(80-100 բառի սահմաններում)*<br><br>*Ներկայացրեք, թե ի՞նչ փուլերով եք կազմակերպելու հետազոտությունը և յուրաքանչյուր փուլի համար ի՞նչ ժամկետներում (հաշվի առնելով ծրագրի գործողությունները՝ ըստ ուղեցույցի): Աշակերտներին ծրագրի ներկայացումը, վերապատրաստման ընթացքում ձեր ստացած հմտություններով կիսվելը, նախապատրաստական առաջադրանքներ իրականացնելը ևս կարող եք դիտարկել որպես գործողություններ* | Առաջին փուլում սովորողներին եմ ներկայացնելու հետազոտության նպատակը. ինչո՞վ է այն կարևոր, ի՞նչ կտա մեզ և համայնքին, ինչպե՞ս պետք է կատարենք հետազոտությունը:<br>Վերապատրաստումների ժամանակ մեր ստացած գիտելիքներով կիսվելու եմ աշակերտների հետ՝ հիմնվելով ձեռքի տակ եղած համապատասխան նյութերի վրա:<br>Միասին որոշում ենք, թե կոնկրետ ինչ խնդրի պետք է անդրադառնանք:<br>Կազմում ենք պլան, որով պետք է առաջնորդվենք:<br>Պատրաստում ենք հարցարանը, որով աշխատելու ենք, հարցերը, որոնք պետք է տանք հարցազրույց վարելիս: |

| | |
|---|---|
| | Ընտրում ենք հավանական այն մարդկանց շրջանակը, որոնց հետ պետք է զրուցենք։ Ժամկետները ավելի հստակ կլինեն պլանը կազմելուց հետո։ |
| ***Հետազոտության հնարավոր ռիսկերը***<br>*(առավելագույնը 80 բառի սահմաններում)*<br><br>*Փորձեք պատկերացնել և ներկայացնել, թե հետազոտության իրականացման համար ի՞նչ դժվարություններ կամ խոչընդոտներ կարող են լինել և ինչպե՞ս եք պատրաստվում հաղթահարել դրանք* | Դժվարությունները, ենթադրում եմ, կարող են կապված լինել այն բանի հետ, թե մարդիկ կհամաձայնվե՞ն արդյոք նշել իրենց անունը, անձնական տվյալները։<br>Կփորձենք համաձայնություն ստանալ մարդկանցից։ |
| ***Աշակերտական խմբի ներգրավման մոտեցումներ***<br>*(80-100 բառի սահմաններում)*<br><br>*Ինչպե՞ս եք կազմելու աշակերտական խմբերը, ի՞նչ մոտեցումներ եք կիրառելու, ինչպե՞ս եք կատարելու պարտականությունների/աշխատանքների բաշխումը* | Հաշվի եմ առնելու երեխաների կարողունակությունները, պատրաստակամությունը։<br>Նախնական տրվել են հանձնարարություններ՝ պարզելու համար, թե երեխաներից ո՞վքեր կարող են կատարել նման աշխատանք։<br>Պարտականությունների բաշխումը դեռ չեմ իրականացրել, բայց երեխաները ինքնակազմակերպվել են, սկսել են աշխատել, մի մասը արդեն գրադարաններ են սկսել այցելել նյութեր հավաքելու համար, երկու հոգի տեսանյութ են պատրաստել, պարզել են, որ գյուղում եղել է ուղղափառ եկեղեցի, գտել են և նկարել գյուղի՝ 1926 թվականի երկրաշարժից խոնարհված  եկեղեցու խաչը, արդեն ունեն նախնական կազմած այն մարդկանց անունները, ումից կարող են արժեքավոր տեղեկություններ ստանալ։<br>Երեխաները հետաքրքրված են գյուղի պատմության մասին ամբողջական ուսումնասիրություն անելով։<br>Պլան դեռ չենք կազմել, քանի որ նոր տեղեկությունները դեռ համալրում ենք, որ հետո կանոնակարգենք աշխատանքները։ |

| Հետազոտության ամփոփ նախագիծ 6 | |
|---|---|
| ***Մարզ***<br>***Համայնք***<br>***Դպրոց***<br>***Ուսուցիչ*** | Շիրակ<br>Ք. Գյումրի<br>Թիվ 15 հիմնական դպրոց<br>Լաուրա Գրքիկյան |
| ***Հետազոտության թեման***<br>*Գրեք թեման կամ վերնագիրը* | Գյումրի քաղաքի փոխակերպումները խորհրդային և հետխորհրդային տարիներին՝ Անտառավան թաղամասի օրինակով |
| ***Հետազոտության խնդիրը***<br>***(20-40 բառի սահմաններում)***<br><br>*Ներկայացրեք, թե ի՞նչ հետազոտական խնդիր եք լուծելու, ինչո՞ւ է դա կարևոր, ի՞նչ կիմանան աշակերտներն այդ հետազոտական խնդիրն ուսումնասիրելու արդյունքում* | Ուսումնասիրության միջոցով բացահայտել խորհրդայինից հետխորհրդայինի անցման որոշ առանձնահատկությունները Գյումրու Անտառավան թաղամասի խորհրդային և հետխորհրդային փոխակերպումների / անվանափոխությունների, բնակչության փոփոխության, շենքերի ու շինությունների փոփոխությունների միջոցով: Հետազոտական խնդիրն ուսումնասիրելու արդյունքում աշակերտները **կիմանան** համայնքի պատմությունը, համայնքի կառույցների /շենք, շինություն, հուշարձան/ և դրանց անվանակոչությունների, համայնքում կարևոր դերակատարում ունեցած մարդկանց մասին, Անատառավան թաղամասի անվանափոխությունների ու բնակիչների պատկերացումների, նրանց կյանքում թաղամասի ունեցած ազդեցությունների մասին, տարածքի անվանափոխությունների ու քաղաքական գաղափարախոսությունների միջև կապի մասին: |
| ***Հետազոտական հարցեր***<br>***(առավելագույնը 100 բառի սահմաններում)***<br><br>*Հետազոտական խնդիրներից ելնելով՝ ի՞նչ հետազոտական հարցերի եք պատրաստվում անդրադառնալ (ներկայացրեք հարցերի ձևով, օրինակ՝ ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունեցել մեր գյուղի/համայնքի եկեղեցու հետ խորհրդային և հետխորհրդային շրջանում,* | Հետազոտության խնդիրներից ելնելով՝ պատրաստել ենք հետևյալ հետազոտական հարցերը.<br>➢ Ինչպիսի՞ փոփոխությունների է ենթարկվել Անտառավան թաղամասը խորհրդային տարիներին: Արդյո՞ք քանդվել են նախկին շենքերը/շինությունները և տեղում նորերն են կառուցվել, թե՞ այն ամբողջությամբ խորհրդային |

| | |
|---|---|
| *ինչպե՞ս էին փոփոխությունները անդրադառնում մարդկանց կյանքի ու պրակտիկաների վրա, այլ…)* | շինարարության արդյունք է: Ի՞նչ սկզբունքով է այն կառուցվել, արդյո՞ք խորհրդային քաղաքային պլանավորման մոտեցումներով է կառուցվել, թե՞ ոչ:<br>➢ Ի՞նչ փողոցներ էին մտնում ներկայիս Անտառային թաղամասի մեջ խորհրդային տարիներին: Ինչպիսի՞ անվանումներ ունեին դրանք: Ի՞նչ անվանափոխումների են ենթարկվել խորհրդային տարիներին և ԽՍՀՄ փլուզումից հետո և ի՞նչու:<br>➢ Ի՞նչ հասարակական նշանակության շենքեր/շինություններ կան թաղամասում: Ինչպե՞ս են դրանք փոխակերպվել խորհրդային միության ընթացքում և փլուզումից հետո:<br>➢ Ի՞նչ հուշարձաններ կան տարածքում: Ե՞րբ և ո՞ւմ նախաձեռնությամբ են դրանք կանգնեցվել /կառուցվել: Կա՞ն /եղե՞լ են արդյոք հուշարձանների հետ կապված միջոցառումներ:<br>➢ Ի՞նչ փոփոխությունների է ենթարկվել թաղամասի բնակչությունը, ովքե՞ր են եղել առաջին բնակիչները, արդյոք կա՞ էական տարբերություն խորհրդային տարիների և ներկայիս բնակչության միջև: |
| ***Հետազոտության մեթոդաբանություն***<br>***(100-200 բառի սահմաններում)***<br><br>*Նկարագրեք, թե ինչպե՞ս եք ուսումնասիրելու թեման, որ կարողանաք պատասխանել հետազոտական հարցերին, ինչպիսի՞ տեղեկություններ եք հավաքելու, ինչո՞վ եք հիմնավորում այդ մեթոդի ընտրությունը, ինչպե՞ս (օրինակ դիտարկումներ, մամուլի հրապարակումներ, հարցազրույցներ, այլ…), ումի՞ց, ինչպե՞ս եք ընտրելու* | Թեման ուսումնասիրելու և հետազոտական հարցերին պատասխանելու համար մեզ անհրաժեշտ կլինեն՝<br>➢ արխիվային նյութեր<br>➢ տեղական թերթեր, ամսագրեր<br>➢ համանքային գրանցամատյաններ<br>➢ տարբեր, հատկապես անունների ռեգիստրներ<br>➢ նյութական աղբյուրներ, օրինակ՝ հուշարձաններ<br>➢ տարբեր կառույցներ, տներ, քանդակներ |

| | |
|---|---|
| *զրուցակիցներին, ինչո՞ւ հենց նրանց, որքա՞ն հարցազրույցներ եք անելու, ինչպե՞ս եք գրանցելու տվյալները, եթե հարցարան եք կիրառելու, ներկայացրեք հարցերի մոտավոր շրջանակը: Ինչպե՞ս եք վերլուծելու արդյունքները (օրինակ՝ հարցազրույցների սղագրությունների, ֆոտո, վիդեո նյութերի, երկրորդային աղբյուրների տվյալների համադրում, տեքստի ձևով շարադրանք՝ որոշակի կառուցվածքով)* | ➢ լուսանկարներ<br>➢ բանավոր պատմություններ:<br>Որպես զրուցակիրներ կընտրենք խորհրդային և հետխորհրդային շրջանում ապրող տարեց մարդկանց՝ համայնքում ապրող, մարզային կառույցներում, խմբագրատանը աշխատող, կամ անկախ տարիքից մարդիկ, ովքեր քաջատեղյակ են մեզ հետաքրքրող պատմություններից: Բնական է, որ օգտագործելու ենք հարցարան՝ կազմելով համապատասխան հարցեր հարցազրույցի համար: Նախապես կազմված ժամանակացույցը հիմք ընդունելով, զրուցակցի հետ պայմանավորվելուց, հարցազրույցի նպատակը ներկայացնելուց հետո, զրուցակցից կիմանանք անուն/ազգանուն, ծննդյան տարեթիվ: Կխնդրենք թույլտվություն ձայնագրման համար՝ հիշեցնելով, որ այն առայժմ ոչ մի տեղ չի օգտագործվելու, իսկ օգտագործման համար թույլտվություն կխնդրենք: Կկատարենք ֆոտո և վիդիո նկարահանումներ, նաև կնոթագրենք: Այս ամենը կատարելու ենք՝ պահպանելով հետազոտական էթիկայի կանոնները:<br><br>Արդյունքները վերլուծելու և ներկայացնելու ենք շարադրանքի, պաստառի, տեսանյութի կամ այլ ձևաչափով: |

| | |
|---|---|
| ***Հետազոտության ժամանակացույց***<br>***(80-100 բառի սահմաններում)***<br><br>*Ներկայացրեք, թե ի՞նչ փուլերով եք կազմակերպելու հետազոտությունը և յուրաքանչյուր փուլի համար ի՞նչ ժամկետներում (հաշվի առնելով ծրագրի գործողությունները՝ ըստ ուղեցույցի) Աշակերտներին ծրագրի ներկայացումը, վերապատրաստման ընթացքում ձեր ստացած հմտություններով կիսվելը, նախապատրաստական առաջադրանքներ իրականացնելը ևս կարող եք դիտարկել որպես գործողություններ* | **Նոյեմբեր-Դեկտեմբեր 2021**<br>- Հետազոտության թեմայի ընտրություն<br>- Թեմայի նպատակների ու խնդիրների ներկայացում<br>- Հետազոտական գործողությունների իրականացում<br>- Հետազոտական նախագծի պլանի ներկայացում<br>**Դեկտեմբեր**<br>- Աշակերտական խմբերի ձևավորում<br><br>**Հունվար 2022**<br>- Առցանց տեղեկատվական հանդիպման մասնակցություն ուսուցիչների և աշակերտների համար<br>**Փետրվար-մարտ 2022**<br>- Հետազոտական աշխատանքների իրականացում<br>**Մարտ**<br>- Հետազոտական պլանի կատարողականի ներկայացում<br>**Մարտ**<br>- Գարնանային դպրոցին մասնակցություն<br>**Ապրիլ**<br>- Հետազոտական աշխատանքների ներկայացում<br>**Մայիս-հունիս**<br>- Հետազոտական մրցույթի ամփոփում: |
| ***Հետազոտության հնարավոր ռիսկերը***<br>***(առավելագույնը 80 բառի սահմաններում)***<br><br>*Փորձեք պատկերացնել և ներկայացնել, թե հետազոտության իրականացման համար ի՞նչ դժվարություններ կամ խոչընդոտներ կարող են լինել և ինչպե՞ս եք պատրաստվում հաղթահարել դրանք* | Հետազոտության ընթացքում հնարավոր են դժվարություններ և խոչընդոտներ: Հնարավոր է, որ անհրաժեշտ փաստաթղթեր չտրամադրվեն, չցանկանան հարցազրույց տալ: Դրա համար նախապես պատրաստել համապատասխան փաստաթղթերը կնիքով, թույլտվության գրությունով, գաղտնիությունը պահպանելու երաշխիքով: Շատ կարևոր է էթիկայի կանոնների |

| | |
|---|---|
| | պահպանումը, զրուցակցի իրավունքները հարգելը: |
| ***Աշակերտական խմբի ներգրավման մոտեցումներ***<br>***(80-100 բառի սահմաններում)***<br><br>*Ինչպե՞ս եք կազմելու աշակերտական խմբերը, ի՞նչ մոտեցումներ եք կիրառելու, ինչպե՞ս եք կատարելու պարտականությունների/աշխատանքների բաշխումը* | Հետազոտական թիմը բաղկացած է լինելու նվազագույնը 5 աշակերտից: Աշակերտական խմբի մեջ ընդգրկվելու են 9-12-րդ դասարանի այն աշակերտները, ովքեր ավելի լավ են ծանոթ Խորհրդային Միության պատմությանը: Թիմը հետազոտական նախագծի վրա աշխատելու համար կունենա շուրջ 2 ամիս ժամանակ՝ փետրվարից մարտ: Նրանք լիարժեք հնարավորություն կունենա աշխատելու ինչպես խմբային, այնպես էլ անհատական տարբերակով: Աշակերտները նախապես պետք է իմանան, որ ներկայացնելու են հետազոտության մասին պատմող որևէ նյութ՝ շարադրություն, պաստառ, տեսաֆիլմ և այլն: Ընդ որում, աշակերտներից յուրաքանչյուրը կարող է աշխատանքը ներկայացնել և՛ անհատական, և՛ համատեղ եղանակով: |